Բ· ՇՐՋԱՆ 1874 ՍԵՊՏԵՄԲԵՐ 3 ԵՐԵՔՇԱԲԹԻ Ն· Տ· ՍԵՊՏԵՄԲԵՐ 15 Թիւ 100

ԱՍԻԱՆ ամեն օր կը հրատարակուի բաց ի կիրակէ և տօն օրերէ ։

Նրագրոյս գրասենեակը կընդ է կ· Պոլիս, Ցուլթան Համամ Էսկու Կիֆնտի լան միչնայարկ թիւ 11 ։

Բաժնորդագինը կանխիկ չը վճարուած թերթ չը ղրկուիր գաւառները ։

Ծանուցման տողը 2 ղրշ։

ԲԱԺՆՈՐԴԱԳԻՆ

Կ· Պոլսոյ համար

Տրկն· (300 թիւ) 90 ղրշ·
Երկմյ· (30 թիւ) 15 »

Գաւառաց համար

Տրկն· (300 թիւ) 6 մճռ·
Վց·մյ· (150 թիւ) 3 »
Եռմյ· (75 թիւ) 1 1/2 »

փօստային ծախքը մեր վրայ է ։

ԱՐԱՐ

ՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

10 փր· ԼՐԱԳԻՐ 10 փր·

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԿԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

Ազգային կրօնական Ժողովս նկատելով՝ որ Մայրաքաղաքիս եկեղեցւոց մէջ առ այժմ գտնուած քահանայից թիւը բաւական է — գուցէ և աւելի— , արժան կը դատէ ծանուցանել առ դաս քահանայից և առ թաղ· խորհուրդս Մայրաքաղաքիս, որ այսուհետև նոր քահանայք չպիտի ձեռնադրուին մինչև՝ ի նոր տնօրէնութիւն, զոր ժամանակին կ՝ազդարարէ կրօնական Ժողովս՝ առ որ անկ է ։

Ի դիմաց կրօն· Ժողովոյ
23 Օգոստ· 1874 Ազգ· Վարչութեան
ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ
Խոշէ Վրդպտ· Պ· Խոշէ Աբէտ· Ն·ր Պէկ
Կէրմեանց

Անցեալ չաբաթ օրի փունջին մէջ կը կարդանք որ Ընդհանուր Ժողովին Ա· ատենապետ Վսեմ· Բարութիւն Էֆէնտի Տատեան և երկու ատենադպիրք ուրբաթ օր Քաղաքական Ժողովին հետ խորհրդակցելով որոշեր են Ընդհ· Ժողով հրաւիրել դռնփակ նիստ անելու պայմանով և այդ նիստին մէջ պիտի առաջարկուի եղեր տոմսակով ասնդիր ընդունիլ ։

Կը ցաւինք որ ո՛չ Ամեն· Պատրիարքը ոչ, Ազգ· վարչութիւնը և ոչ ալ Ընդհ· Ժողովին դիւանը տակաւին չ՛են համոզուեր թէ այդպիսի դռնփակ նիստերով ազգային գործերը չ՛են կրնար բարեկարգուիլ, թէ բռնական ընթացք և անպատեհ դարմանները չ՛են կարող ազգին վէրքերը բուժելու, այլ աւելի սաստկացնելու կը ծառայեն։ Ի՞նչ սպասենք տակաւին այնպիսի Ընդհ· Ժողովէ մը որ Ժողովուրդին ձայնը արհամարհած և իւր վարկը կորուսած է ։

Այլ թէ ի՞նչ պէտք է անել ազգին ներկայ ցաւալի վիճակին դարման տալնելու համար, այդ մասին ամենեցուն ուշադրութիւնը կը հրաւիրեմք Տիխիսի Մեղու Հայաստանի չաբաթաթերթին օգոստոս 10ի թիւին մէջ գրուած հետևեալ յօդուածին վրայ որ յուլիս 3ի վերջին Ընդհ· Ժողովին վրայ խըմբագրին արած մի անկողմնակալ խորհրդածութիւնն է ։

«Անցեալ յուլիսի 3ին Կ· Պոլսոյ Եբեսփոխանական Ժողովը նիստ է ունեցել, որ կրկին ապացոյց կ՝երևի է համարել նորա անկարողու Իւան և ազդի՝ներկայացուցչութեան անյարմար լինելուն ։ Նիստը շատ փոթորկալից եղել է, և հասել է գործը կռուի և ձեռի՝ներկայ եղող բազմութեան մէջ, այնպէս որ ոստիկանութեան պինուորները ստիպուել են խառնվիլ գործին և չաւերը կռուողներից ու ձեռուողներից բանտարկվել են ։ Ի՞նչ օգուտ· սրանով խաղաղութիւն և կարգ չէ կարող վերականգնվիլ ։ Պատճառն այս անկարգութեան եղել է մեծ· Պ· Ս· փափազեանի Եբեսփոխանական Ժողովի ատենապետը ընտրվելն, որով մասին Ժողովրդեան կողմից բողոք է եղել տրված, բայց անուշադիր մնացած ։ Բողոքատու բազմութիւնը պահանջել է, որ ընթացք տրվի իւր բողոքին · և բաւարարութիւն չը ջնջնելով, չը նայելով Սրբազան Պատրիարք Հօր յորդորանաց և ստատման, աղմուկ է բարձրացրել, ցանկալով Ս· փափազեանի հեռանալը Ժողովից ։ Իրաւ է, ոստիկանութիւնը գուցե բանտարկել է ոմանց, Ժողովը էլ Ս· Պատրիարքի ստիպողական պահանջմամբ շարունակել է իւր գործն, ընտրելով կրօնական Ժողովի անդամներ, բայց սոքա մի՞թէ երաշխաւոր կարող են լինիլ, որ ապագայում ազգային երեսփոխանական Ժողովը կանոնաւոր ընթացք կունենայ և կարող կը լինի վերականգնել իւր նշանակութիւնն, յարգն և ազդեցութիւնը ։ Սրբազան Պատրիարք հայրը հաչտեցրեց այն անձանց, որոնք իբրև թէ զանազան կուսակցութեանց առաջնորդներ էին Եբեսփոխանական Ժողովի մէջ, և աւելորդ վիճաբանութեանց առաջն առնելու համար, որոշեց իւր մօտ առանձին Ժողովներ կազմելու այն անձինքներից, որոնք գլխաւոր խօսողներն են Երեսփոխանական Ժողովի մէջ, որ սոքա արտաքոյ Երեսփոխանական Ժողովի նախընթացաբար վիճաբանելին գլխաւոր խնդիրներն վերայ և ապա համաձայնութեան հասնելից յետ մտնեին Ժողով ։ Ինչ հետևանք ունեցաւ այս · արդեօք պատկառանքն անկարգութիւնքը Ժողովում, արդեօք ձեռն ու կռիւը վերջացան, ոչ ։ Մարկոսը կերակոսի հետ և Պետրոսը Պօղոսի հետ հաչտվեցան ։ բայց ո՛ւր մնայ այն հաղարաւորից բաղկացած բազմութիւնն, որ ոմանց չնորհիւ նոյնպէս բաժանված է կուսակցութիւններ · տեսնենք, այս հազարներն էլ Սրբազան Պատրիարքի մօտ ճաչ կերա՞ն ու հաչտվեցա՞ն միմեանց հետ ։ Սրանց երեսփոխանք ոմանք փչացրին, գործիք չինեցին իրանց կրքերին և չահերին, բարեմիտներն վերայ բռնանալու համար, այժմ իրանց եփածը պիտի վայելեն ։ Ժողովուրդը վարժեցրին անկարգութեան և բռնութեան · իրանք հաչտվեցան ։

Բայց Ժողովուրդն այդպէս չուտ չէ հաչտվում· նա դեռ երկար պիտի

վրդովէ ժողովին խաղաղութիւնն և արդելք լինի գործերի կանոնաւորութեան. Նորա կիրքն աւելի զօրեղ է, նա մինչև ցայժմ երեսփոխանաց ամենց գործիք է եղել բռնութեան, այսուհետև ինքն պիտի բռնանայ նոցա ժողովի մէջայ, որովհետև սա ոչ իւր գործունէութեամբ, ոչ իւր կանոնաւորութեամբ և ոչ իւր արդիւնաւորութեամբ ստացել է նորա յարգանքն, երեսփոխանական ժողովը վարկ չունի նորա աչքում. նա պատկառելի չէ. Ներկայ երեսփոխանական ժողովը արդէն կորցրել է իւր ազդի ներկայացուցչական պատկառելի նշանակութիւնն. Եթէ նա վայր գցեց մի գա րիւրք, որ իրաւամբ վայելում էր ազդի մեծ մասի սէրն ու համակրութիւնն, իրան ճնում է, եթէ միայն ցանկանում է ազդի լաւութիւնը, քննութեան ենթարկել անցեալն, որ վրդովել և յուզել է ազդը, պատժել յանցաւորներն և լուծվիլ. Նոր կազմված երեսփոխանական ժողովն միայն կարող է ստանալ ազդի յարգանքն, որովհետև նորա հետ կապուած չէ ոչ մի աւանդութիւն, ոչ մի կուսակցական հնարիգայ. Ամեն ներկայացուցչական ժողով, լինի այն երեսփոխանական ժողով հոգաբարձութիւն, թէ խնամակալութիւն, եթէ նա կորցրել է իւր նշանակութիւնն ու վարկն իւր ապարդիւն գործունէութեամբ, կրքոտ վարմունքներով և կամ մինչև անգամ ակամայ սխալմամբ, չէ կարող գործ տեսնել և պէտք է լուծվի, եթէ կամենում են, որ հասարակական գործերն ու հաստատութիւնք ջնաս չը կրեն. Այսպէս ներկայ երեսփոխանական ժողովն իւր գործակատարութեամբ հասել է այն դրութեան, որ պիտի լուծվի. Նորա համար այլ ևս չը կայ միջոց վերականգնելու իւր նշանակութիւնն. Ամեն հնարները կը լինին միայն կիսամիջոցներ, որոնք աւելի կը թեթևացնեն նորա կշիռը ու նորանոր վնասների առիթ կը լինին. Եթէ երեսփոխանական ժողովի մէջ կայ խոհեմութիւն, եթէ նա կամենում է Սահմանադրութիւնն ազատել անկումից՝ պիտի լուծվի. Եւ այս նրան աւելի պատիւ կը բերէ, քան իւր բոլոր անօգուտ ճիգն ու ջանքն ինչ և իցէ գործ գործելու համար յօգուտ ազդի թշնամւոյ վիճակը բարւոքելու. Ոչ միայն երեսփոխանական ժողովը, այլ և սրանից գոյութիւն ստացած վարչական մասերը պիտի լուծվին և նորոդվին նոր ընտրութեամբ, այսպէս թէ քաղաքական և թէ կրօնական ժողովների անդամներն էլ նորից պիտի ընտրվին. Այսպիսի ընդհանուր փոփոխութեամբ միայն կարելի է հասանել նրան, որ և իցէ կարգ ընկնի ազգային կառավարութեան մէջ. Որտեղ կրքերը չափազանցութեան են հասած; այնտեղ յորդորանքն ու իրատը փոքր աղդեցութիւն ունեն. Այսպիսի գէպքում՝ միայն հիմնական յեղափոխութիւնը կարող է օգնել. »

. . Թմբագիր Ասիա աղդօգուտ լրագրոյ.

Կը խնդրուի որ ներկայիս Ձեր ադատախօս թերթին մէջ սրճադանք մը չնորհելու բարեհաճիք.

Կրօն. ժողովը անցեալներ կ'յայտարարէ թէ՝ ըստ առաքելական սահմանադրութեան « կարի անարգ և անպիտան քահանայ մ' անդամ պէտք չէ անարգել» և կը յարէ թէ «եթէ ունի մէկը եկեղեցականի մը վրայ անհնազանդ կամ լուռած յանցանք մը, պէտք է հաղորդել իրեն՝ (կրօն. ժողովոյ) ի տնօրէնութիւն. Օրինաւոր յայտարարութիւն. բայց այս պատուէրը՝ ամբաստանութեան համար և եթէ է որ երբեմն ազգի, եկեղեցւոյ, և բարոյականի՝ փառաց և պատուոյ նախանձախնդիր անձանց կողմանէ՝ և երբեմն չահախնդիր, չար, և խռովարար անձանց կողմանէ կը լինի ղբրպարտօրէն, վրէժ մը լուծելու համար միայն (ինչպէս եղաւ վանայ Պօղոսեանեանց կողմանէ՝ Ս. Խրիմեան Հայրիկի վրայօք գրուած ղրպարտական ու դժոխալեղուս տետրակը, որու հեղինակները կ'ընդունին՝ և ընդունելոց են իրենց արժանաւոր պատիժը բարեհնաւմ կառավարութեան արդարադատ ատենին առջև). Այժմ՝ մեր ըսելիք այս է որ, եթէ եկեղեցական մը՝ առանց կրօն. ժողովոյ հաղորդելու՝ ստուգապէս և անստուգապէս ամբաստանելի ապօրինաւոր է (ըստ յայտարարութեան), ո՞րչափ և առաւել անարգելի կը լինի այն մարդը որ կը յանդգնի հրապարակաւ բարձրաստիճան եպիսկոպոս մը՝ ազգի հանրութեան բարերար և սիրելի Խրիմեան սրբազան Հայրիկը՝ (թո՛ղ թէ կարի անարգ և անպիտան քահանայ մը) իւր դժոխաբան բերանովը յանիրաւի հայհոյել, սիրտ բառնալ (1) ուղղել նորա մօրուաց: Ահա՛, տե՛ր. այս այն այր է որում «Աբրահամ Տատեան» անուն կուտան, որ յանդգնեցաւ չուկայի մէջ (2) բազմութեան առջև զաղիր հայհոյութիւններ ընել Նորին Սրբազնութեան, ի նախատինս եկեղեցականութեան և մարդկութեան, որով վիրաւորեց լսողաց զգացումը, և չարժէց արդար զայրոյթը՝ առ ի հանել հրապարակ ղիւր արժանիքը դնահատելու համար.

Աներկբայելի է որ հայհոյութիւնը՝ ապականեալ և ժանդոտեալ ղէնք մի է վատերու համար, որուն գործածողը միայն կ'ապականի և մարգկութեան դասակարգէն դուրս կը նետուի բարոյապէս. Հայհոյողը՝ կամ օրինաւորապէս խօսիլ չը գիտցող մէկն է որ հայհոյութեամբ միայն կը չատանայ իւր գժնեայ կիրքը յագեցունել, կամ խռովայոյզ և չարամիտ մէկն է որ կ'ուզէ հասարակութեան զգացումը գրգռելով կագ և կռիւ յարուցանել. Առնդմէ որն ալ լինի վերոյիշեալ հայհոյիչի բաժինն, անտարակոյս զինքը մեղապարտ կ'կացուցանէ մարդկութեան առջև.

1874 30 օգոստ. Ձեզ երախտապարտ
Ի Կ. Պ. վէզիր խան Գեւորգ Քէլէնթեան
Նպաստվճառ

———

Ինչպէս որ ծանուցած էինք, Ամեն. Խրիմեան Սրբազան Հայրիկ հինգշաբթի օր հանդիսաւոր Ս. Պատարագմատոյց Ղ. ղաթիխի Ս. Լուսաւորիչ եկեղեցին.

Անհամար բազմութիւն ժողովրդեան ներկայ կը գտնուէին. Հայրիկի անունը շրջակայ դիւղերէն իսկ մեծ բազմութիւն մը իրեն ձգած և բերած էր հոն. Եկեղեցին մէջն ու քովի մատուռները բազմութիւնը խառնուած ըլլալէն զատ՝ դուրսի բանն ալ անխիւ բազմութեամբ մը լեցուած էր. Դժպիխայ՝ք կը վրկայեն թէ եկեղեցին երբէք այդչափ բազմութիւն լցուած չ'էր.

Սրբազան Հայրիկ ժամու մը չափ իւր սրտաշարժ և ազդասիրական քարոզութեամբը ժողովուրդին յորդորներ կարդաց և ազօթեց ազդապաշտպանութեան համար որ անարգել և անվհատ կարենան իւրեանց պաշտօնը չարունակել.

Մի բան միայն կար տխուր այս հոգեղարձ հանդէսին մէջ որ էր Ամբրոսիոս իսկէնտէրեանին ներկայութիւնն ու Ս. Պատարագին սպասաւորութիւնը. Այս տխրութիւնը այն աստիճան զգալի կերպով կ'տեսնըէր ժողովուրդին վրայ որ Ս. Հայրիկի քարոզը լրանալէն վերջ երբ Ամբրոսիոս սկսաւ Ս. Աւետարանը կարդալ,

(1) Ես բառեկամիս խանութը նըստած տեսե՝ սա հայհոյիչը գալով «աչքդ լո՛յս» ըսաւ բարեկամիս— ինչ կայ, ըսաւ բարեկամս.—Մ. Մանուկը բանտարկեցին, ըսաւ հայհոյիչ.— ՚ր Մ. Մանուկը, ըսաւ բարեկամս— նա որ Խրիմեանի մօրուքը . . . այսպէս ըրաւ . . . յարեց հայհոյիչը. գուշեի՛ լեզու.

(2) Զատիկ ճօքուչին որ ինքն ալ հոն խանութ ունի,

ժողովուրդը Ամբոսխոսին ձայնը առաջին պես խուռն ընթաց սկսաւ եկեղեցիէն դուրս թափիլ։

Եէնի—Գափուի Հայկ. վարժարանին պարզևաբաշխութեան հանդէսին առիթով բացուած վէճին նկատմամբ ՎԱՐԱԶԴԱՏ առտուդ բուն թիւնով մի նամակ ստացած ենք ուր տեղերնուս անձնութեանը պատճառով ափսուեցանք վաղուան թողլու։

Ծոախօս թերթը չաբաթ օր կը դրէթէ Պօղոս և Ամբոսխոս վարդապետաց բարոյականին՝ իբրև բարոյականութեան ջերմ նախանձախնդիր՝ դատախազ կանգնող խուռբը ինչո՞ւ Թրիմեանի բարոյականին դէմ հրատարակուած տեսարակին համար դատ չ'են պահանջեր։

Կ'արժէ՞ միթէ դատ բանալ այնպիսի տեսարակի մը դէմ որուն համար ոչ ոք ես պատասխանատու եմ կ'ասէ։ Տպագրիչը ինձի բերին տպեցի կ'ասէ. տպագրիչին տանող Սըմսարեանն ալ կ'ասէ թէ ես պատասխանատուութիւն չունիմ ես մտածողը չեմ առնուր այդ մասին. վանէն ստորագրեալ ղրկեր էին տպելու համար, ես ալ տպել տուի։ Բայց ստորագրութիւնները սուտ և խարդախեալ են եղեր, լսածնուս նայելով։

Արդ՝ Ծոախօս թերթը կ'առարջարկէ դատ բանալ մի այնպիսի տեսարակի դէմ որուն համար ոչ ոք կ'ասէ թէ ես գրեցի կամ ես պատասխանատու եմ. մինչդեռ Ամբոսխոսին ընդ ձեռքերնիս ունինք, Պօղոսին համար ամբաստանութիւնն անոնները երաչխաւոր տուածեն Պօղոսին ծախքը վճարելու, եթէ չը կարենան ապացուցանել բամբասանութիւնին հաստատելու. ինչպէս նաև Ծոախօս թերթին խմբագրապետին համար գող, ամենավատ, խարդախ և այլն անուններով ց՝ստորագրութիւնը հրատարակողներէն մի քանին գրածնին հաստատելու պատրաստ լինելնին ստորագրութեամբ յայտնած են ոտիկանութեան պաշտօնատունը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիէննա, 12 սեպտ.

Պօրսան միշտ հաստատուն է. գիներուն մէջ թեթև փոփոխութիւններ եղած են։

Պրանտէյ, 12 սեպտ.

Կայսրը՝ որ հոս եկած էր պիւտրական կրթութեանց ներկայ գտնուելու համար, մեկնեցաւ դնաց։

Ֆրայտպէրկ, 12 սեպտ.

Գերմանիոյ կայսրը հոս հասաւ։ Հէսսէի Մեծ Դուքսը երկաթուղւոյն կայարանը ընդունեց զնա և մինչև դղեակը ընկերացաւ նմա հետ։

Բարիզ, 12 սեպտ.

Մարդ — Մահն Մարաջախտը «կեցցէ հանրապետական՝ Մարդ—Մահուն» աղաղակներով ընդունեցաւ Լիլի մէջ։

Պէլճիդայի զօրապետ մը երկաթուղւոյն կայարանը եկած էր Լէոբոլտ Թագաւորին կողմէն Նորին վեհափառութեան յարգանքը մատուցանելու համար։ Մարաջախտ—նախագահը ընդհանուր ժողովոյ նախադահին պատասխանելով, ասաւ. «Աղգ. ժողովին ինձ վստահացած պաշտօնը հաստատամտութեամբ և վստահութեամբ պիտի չարունակեմ, ամեն կուսակցութիւնէ չափաւոր մարդոց օգնութեամբը» Մարաջախտը Արբրաս, Պիթիէն, Ամիէն և Ս. Քլօտէն պիտի երթայ և ուրբաթ օր վերստին Բարիզ պիտի դայ։ Լիան անելիք ուղևորութիւնը անորոշ կերպով եւս մնացած է։

Բարիզ, 13 սեպտ.

Պ. Կիզօ մեռաւ։

Մարդ—Մահն Մարաջախտը Պիթիէնի քաղաքապետին ճառին պատասխանելով ասաւ թէ կը յուսամ որ Ազգ. ժողովը չուտով պիտի վաւերացնէ Սահմանադրական օրէնքները։

Մարաջախտին եղած ընդունելութիւնը շատ համակրական էր։

Մատրիտ, 12 սեպտ.

Բավիա զօրապետը Մաէսթրօճօի մօտ գարշտահարները բոլորովին ցիր և ցան արաւ։

Նոր Եորք, 12 սեպտ.

Երկրագործական Դիւանատունը սեպտեմբեր ամսոյն համար չինած տեղեկագիրին մէջ կ'ասէ որ բամբակին հունձքը երաշտութեան պատճառով անցեալ ամիսի տեղեկագրին մէջ յիշուածէն 0/0 ին 20 վար պիտի լինի։

Պուքրէշ, 12 սեպտ.

Ձիչի կոմսը երկաթուղեայ միացման խնդիրին համար բանակցելու պաշտօնով հոս կը գտնուի։

Աթէնք, 12 սեպտ.

Լօտիօմ ֆր. 75

Երեսփոխանաց ժողովը այս ամիս չը լրացած չը պիտի կրնայ պետք եղած թիւն ունենալ։

Կորնթոսէն 4 միլիոն ճիրէվրական լիար խաղող դուրս ղրկուելոյ է։

Այս տարուան նախորդ տարիներուն տեսակէն վար է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուքրէշի վիճակահանութիւնէն ջահոդ թիւերուն ետ ացորդը

(Տես թիւ 99)

Սէրի	Թիւ	Պարգև	Սէրի	Թիւ	Պարգև
2193	71	50	5030	չահոդ	թ չունի
	15	»	5099	»	» »
2242	26	2000	5320	14	50
	3	50		84	»
	100	»	5346	6	»
2439	28	50	5551	87	100
	79	»		58	50
2517	13	1000		11	»
	26	50		100	50
	69	»	5719	20	500
2610	72	50		1	100
	41	»		11	50
2784	22	»		5	»
	38	»		88	»
				73	»
5754	Պր. չհդ.	թ. չունի		6886	30 100
6064	88	500		94	50
	76	50		70	»
6303	31	100		76	»
	80	»	6943	65	100
	67	50		56	50
	32	»		29	»
6398	Պր. չհդ.	թ. չունի		51	»
6566	51	50		60	»
	42	»	7364	58	100
	87	»		33	50
6644	55	1000		93	»
	54	100	7380	93	500
	11	50		69	»
	85	»	7494	11	10000
6821	78	500		12	50
	91	50		81	»
	59	»		90	»
	43	»		33	»

Վերոյիշեալ Սէրիներուն միւս թիւերուն ալ իրենց 20 ֆրանքի գլխավոր ճարը պիտի ընդունին։

Դահլին Մեծ Եպարքոս և յետոյ Գանձուն կուսակալ Էսատ փաշան Ասորեստանի դատաւորին կուսակալ և միանգամայն Դ. զօրապետնակի մուչիը անուանեցաւ։

Կարինի կուսակալ և Դ. զօրաբանակին հրամանատար Մուստաֆա փաշան պետական խորհրդոյ անդամ անուանեցաւ։

Բ. Զօրաբանակին հրամանատար Ահմէտ Մուխթար փաշան Դ. զօրաբանակին հրամանատար և Կարինի կուսակալ անուանեցաւ։

—Պանտրմայի հրկիզեալ չէնքերուն չինութեանը համար մայրաքաղաքէս ղրկուելիք առաղձէն մինչև մի ամիս մաքս չը պիտի առնուի։

—Կառավարութիւնը ընդունեցէն հսկային 30 ղրչ. տուրք պիտի առ-

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ